



N 22-10
03.02.2022

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Կարեն Անդրեասյանին

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ Դիտորդների խումբ) ՀՀ ԱՆ «Նուբարաբեն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ առանձնագրույց են ունեցել հացադալի մեջ գտնվող կալանավորված անձ Նիկոլայ Խաչիկյանի հետ: Վերջինս նշել է, որ ունի առողջական խնդիրներ՝ հեպատիտ C, ոտքը վիրահատված՝ անրակցված է մետաղական ձողով, ունի շիզոֆրենիա, որի կապակցությամբ ընդունում է դեղորայք: Դիմել է նաև ՔԿՀ-ին մեքսիկոնային ծրագրում ընդգրկվելու համար, սակայն դեռևս չեն ընդգրկել: Ն.Խաչիկյանը հայտնել է նաև, որ լյարդի հետ կապված խնդիրներ ունի, որոնք սրվել են հացադալի պատճառով, սակայն որևէ ստուգում չի անցել:

Նշվածի կապակցությամբ առաջարկում ենք իրականացնել Նիկոլայ Խաչիկյանի լյարդի հետազոտություն:

Դիտորդների խմբի անդամները առանձնագրույց են ունեցել նաև ազատազրկված Սերոբ Մխիթարյանի հետ: Վերջինս կուլ էր սովել դանակ և մկրատի պոչ, ցանկանում էր, որ իրեն տեղափոխեն «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ:

Հարցը քննարկվել է հիմնարկի պետի հետ, վերջինս նշել է, որ Ս.Խաչատրյանը հաճախ է կուլ տալիս սուր, կարող-ծակող իրեր, շարունակ քրեակատարողական հիմնարկ շտապօգնություն է հրավիրվում: Ս.Խաչատրյանն ունի նաև հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ:

Նշվածի կապակցությամբ առաջարկում ենք քննարկել Սերոբ Խաչատրյանին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխելու հարցը, միևնույն ժամանակ գտնում ենք, որ վերջինիս նկատմամբ պետք է ցուցաբերվի խիստ անհատական մոտեցում՝ կապված հաճախակի ինքնավնասումների հետ, ուստի առաջարկում ենք նշված անձի հետ անցկացնել հոգեբանի և հոգեբույժի բազմակողմանի կոնսուլտացիա՝ հոգեկան խնդիրների ճիշտ օրոշումը և դրանից բխող համապատասխան գործողությունների ծրագիր կազմելու համար:

Դիտորդների խումբը արդեն մի քանի անգամ բարձրաձայնել է ՀՀ ԱՆ «Նուբարաբեն» ՔԿՀ-ի առաջին հարկում տիրող անմարդկային պայմանների մասին, սակայն յուրաքանչյուր անգամ Դիտորդների խումբը կրկին ակնառտես է լինում, որ այնտեղ պահվում են անձինք: Կրկին անգամ առաջարկում ենք, հիմնարկի առաջին հարկի խցերը հանել շտապօգնության կամ հիմնանորոգել (մինչև հիմնանորոգման ավարտը այդ խցերը չօգտագործել):

Դատապարտյալ Կարեն Մանուկյանը 30.01.2022թ. կատարել էր ինքնասպանության փորձ, որը կանխվել էր խցակցի կողմից:

Խնդրում ենք տեղեկացնել նշված դեպքի վերաբերյալ ծառայողական ֆինուրյուն նշանակվել է, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ եզրակացություն է արվել:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Հարգանքով՝

Խմբի նախագահ

Զարուհի Հովհաննիսյան